Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

A II 31545

27/V 71			1472

ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

91.99.092 [Տերյան]

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926

ՀԱՅԿ ԿՈՄՍՈՄՈԼԻ ԿԵՆՏԿՈՄ
ՑՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿՏԱԳՐԻՐՆ.

Տարված է «Լիմասոլիպով»

Տպարանական Տրեստի 1-ին տպարան

Գրառ. 283 բ. Գատվեր 1881 Տիրաժ 850

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Այս աշխատությունն ավարտված է 1923 թվի դարնանը: Հրատարակելով յերկու և կես տարի հետո, մենք կարիք չենք զգում մտցնել նրա մեջ վորևե փոփոխություն. հետագա շրջումները, նամանավանդ, յերբ նյութը նորից չի վերապրված, խախտում ու թուլացնում են գրվածքի հիմնական տրամաբանության ամբողջականությունն ու նրա հորինվածքի միասնությունը:

Ի հարկե, այս աշխատությամբ մենք չենք ասում Վահան Տերյանը. Տերյանն իրրև բանաստեղծ, չի կապվում Տերյանի՝ իրրև հեղափոխականի՝ հետ: Այստեղում դուցե մենք հնարավորություն ունենանք անդրադառնալու այս պակասին, յերբ լույս կը տեսնի Տերյանի յերկերի խոստացած հինգերորդ հատորը և յերբ, առհասարակ, ավելի առատ նյութ կը լինի թե՛ նրա ստեղծագործության և թե՛ կյանքի նկատմամբ:

Գ. Անանունը վոճական շտկումներ արել մեր ձեռագրի մեջ, վորի համար և հայտնում ենք նրան խորին շնորհակալություն:

Ղ. Ա.

19 գեկտեմբերի, 1925 թ.

Երևան.

Բանաստեղծը վկայում է, որ գարնանն ինքը լսում է «անտես գանգերի կարկաչն...» (73): Նա հավատացնում է, որ միևնույն գարնանը, յերեկոյան դեմ «...մեկն անտես, շարժումով արագ վոսկի յե մաղում...» (148): Նա ասում է, որ իր սիրան այրում են «անքարբառ յերգեր, գողում են շուրջը անխոս դյութական...» (149): Իր սիրած կնոջը բանաստեղծն ասում է. «Կա խորհրդավոր հրապուրանք քո շարժումների անխոս գրույցում...» (42): Միևնույն շարժումների նկատմամբ ասում է. «Ցղթայեցին ինչ ոգակով անտես...» (58): Դա այն շարժումներն են, վորոնք ասնում էյին բանաստեղծին դեպի այլ յերկրների յերանությունները:

Ուրեմն, բացի այլ կամ ուրիշ, բանաստեղծի համար գոյություն ունին ևս ինչ վոր անտես, անխոս, անքարբառ աշխարհներ: Ցերկու այդ աշխարհները հավասար կերպով հմայիչ են ու հաճախ զուգադիպվում են իրարու հետ. նրանք միևնույն են: Զնայած այն հանգամանքին, վոր նորագյուտ աշխարհները չի կարելի վոչ տեսնել, վոչ էլ լսել, այնուամենայնիվ, բանաստեղծը քաջ գիտե նրանց: Արտաքին զգայարանքներով չե, վոր նա իմացել է այդ աշխարհները: Բանաստեղծը, ըստ յերևույթին, ճանաչել է նրանց ինչ վոր խորապես ներքին ուղիներով: Վահան Ցերյանը հասել է գերզգայական իրականության գաղափարին:

§ 3. ՄԻՍՏԻԿՍ:—Արտաքին զգայարաններով մենք ճանաչում ենք յերևելի աշխարհը: Անտեսանելի աշխարհը ճանաչել միևնույն ուղիներով—անհնարին է. նրան կարելի յե իմանալ միմիայն միստիկորեն, յեթե միայն այդպիսի իմացություն առհասարակ գոյություն ունի: Միստիկորեն իմանալ—դա նշանակում է նույնքան անմիջապես առնել ու ճանաչել գերզգայական աշխարհը, վորքան անմիջապես մեր աչքն առնում ու ճանաչում է լույսն ու գույները, իսկ մեր լսելիքը՝ ձայները: Միստիկական ընկալումն, ըստ յերևույթին, յենթադրում ու տալիս է ճշմարտագո աշխարհների մի չափազանց նուրբ իմացություն: Բոլոր մարդիկ, հիրավի, ոժտված են այդ ներքին տեսողությամբ: Սակայն, քչերն են զբաղվում նրանով. այդ ճանաչողությունը շատ է ներհուն ու շատ է հեռու մեր անմիջական գործնական շրջապատից:

Վահան Ցերյանն ունի մի շարք բանաստեղծություններ, վորոնց մեջ հայտնաբերվում են միստիկական ընկալման տարրեր: Մենք կը զբաղվենք նրանցից մի քանիսով:

Առաջինը՝ «Դու շրջում ես ամենուրեք...» (86) վոտանավորն է։—Դեգերելով տեսանելի աշխարհի սահմաններում, բանաստեղծը զիտակցում է, որ կա մի անեբևույթ գոյություն, որին իմաստ ու գեղեցկություն է տալիս յերևելի գոյության։ Այդ անեբևույթ գոյությունն իր սավերը փռել է անծիր աշխարհում, շրջում է ամենուրեք ու խոսում բնության ամեն մի հատվածից. ծաղկից ու դաշտից, ջրից ու յերկնից։ Շմայող ու կախարդող է այն, սակայն, շնորհիվ իր ծայրահեղ նրբության, չափազանց խուսափուկ մեր—գերապանցորեն զգայական—ճանաչողության համար։

Յերկրորդ բանաստեղծության մեջ Վահան Տերյանը հանում է այդ իմացական պրոցեսի մի այլ աստիճանին.

Յես նստում եմ մենակ, մեն-մենակ,
և անվերջ յերազում, ու կրկին
այս կյանքի աշխարհում դժգունակ
իր գարդերն է փռում իմ հոգին։

Բանաստեղծն այլ ևս առաջվա պես չի գրաղվում արտաքին աշխարհով, չի յերնում նրանից։ Նա անմիջապես սուզվում է իր ներքին աշխարհի խորքերը։ Նա յերազում է ու իր յերազանքները դարձարում են զգայական դորշ աշխարհը. արտաքին աշխարհը իմաստ է ստանում միմիայն ներքին աշխարհից բղխող ճառագայթներով։

Յերրորդ բանաստեղծության մեջ Վահան Տերյանը տալիս է զերզգայական աշխարհի լրիվ պատկերը։

Հեռու յերկրի լուսե հովտում
որերն ուրիշ յերգ են հյուսում.
կյանքից հոգնած սիրտս տրտում
այն յերկիրն է միշտ յերազում...
Խաղաղություն այն հեռանիստ,
ուր մի ուրիշ արևի փայլ
ծավալում է անանց հանգիստ
և խնդություն մի անայլայլ,
մի խնդություն մաքուր ու խոր
և անեզերք և անվախճան
ուր քո սիրտը վորք ու մոլոր
գրկում է մի վոսկե շրջան. . . (83):

Գոյությունն ունի յերկու շրջան: Մենք տեսնում ենք բանաստեղծին այդ շրջաններից մեկի աններդաշնակ ուղիներում թափառելիս, վորբ, մոլոր ու գլխիկոր: Բանաստեղծը յերազում և յերազանքներն այդ բաց են անում նրա առջև գոյության այլ, յերկրորդ շրջանը: Ամբողջովին լուսով վողողված է այն, նրա որերը անկարգորեն թափված չեն իրարու վրա, այլ կազմում են մի յերկնային յերաժշտություն: Նրա արևը չի կիզում. իր մեղմ ճառագայթները տարածում են մի ջինջ հանգստություն: Ոտար են նրան ուրախության և տրտմության յելևեջները. այնտեղ իշխողը յուր խնդությունն է, անապակ, անակիզը ու անվերջ, նույնքան խոր, վորքան և ինքը գոյությունը:

§ 4. ՅԵՐԱԶԱՆՔԸ:—Մարդուս յերևակայությունը մի վորոշ տեսակետից շատ ավելի ազատ է, քան մտածողությունը: Մենք ընկալում ենք ժամանակը, անում նրա մասին այս կամ այն դիտողությունը, բայց միշտ էլ յերևակայում նրան տարածության միջոցով: Մեր վերացական հասկացողությունները, համա՛, հանելով ծայրահեղ սրության ու նրբության, այնուամենայնիվ միշտ էլ շարունակում են մնալ կառչած վորևե կոնկրետ պատկերի: Վերջապես, մենք ունինք վորոշ հասկացողություն զերզգայական աշխարհի մասին, բայց յերևակայում ենք նրան զգայականորեն, այսինքն տարածության, գույների և այլ զգայական պահեստանոցներից փոխ առած տվյալներով: Մեզ թվում է, վոր Վահան Տերյանը զերզգայական աշխարհն ընդհանրապես պատկերանում է իր

բև լույսի մի անծայրածիր հոսանք, վորը, յերկնքի կապույտ-նեբում սահող ճերմակ ամպերի նման, դանդաղ անցնում է անդրյերկրային տարածությունների վրայով:

Մենք արդեն տեսանք, վոր յերազանքը, անուրջը Վահան Տերյանի համար ճանաչողություն է: Հետաքրքրական է, ի՞նչպես են նրանք պատկերվում բանաստեղծի գիտակցության մեջ:—«Ելեգիա» վոտանավորում մենք կարդում ենք. «Թախիծս խաղաղ (է) անուրջի նման» (16): Հետևապես, յերազանքի առաջին հատկությունն է հանգիստը, խաղաղությունը: ***վոտանավորում Տերյանն ասում է.

Տխուր մեռան կապույտաչյա
յերազները յերկնաշող.—
գագաթներից յես ցած իջա
անդունդները սիրտ մաշող:
Եվ վոչ մի թև ինձ չի տանի
դեպի բարձունքն արծաթյա.
— Խենթ անկումիս գերեզմանի
խավարներում ինձ գթա՛ . . . (38)

Յերազանքի յերկրորդ հատկությունն այն է, վոր նրանց բնակատեղին բարձունքներին են, արծաթյա գագաթները: «Սպրթք» վոտանավորում բանաստեղծն ասում է.

Յես ընկա անդունդները խավար,
— իմ ցնորք նորից քեզ եմ կանչում...
Դու անմութ աշխարհում ես ապրում,
հիշի՛ր դու խավարում տանջվողին... (61)

Յերազանքի յերրորդ հատկությունն այն է, վոր նրանք բնավոր աշխարհներում են ապրում: Ուրեմն, այնտեղ, վերևում, յերկնահուպ կատարներին, ասոված ածային անդորրության մեջ բնակվում են լուսե պայծառ յերազներ: Սրան հակադրվում է այստեղը, վարը, ուր միայն անդունդներ են ու գերեզմաններ: Վերևում կատարելություն, ներքևում քաոս. վերևում արքայություն, ներքևում դժոխք. վերևում ասոված, ներքևում սատանա: Սա մի պատկերացում է, վորը դեռ շատ հեռու հատուկ է այլ և այլ կրոններին ու փիլիսոփայական սիստեմներին:

Յերազանքները Վահան Տերյանի համար ճանաչողության ու աշխարհայեցողության հիմնաքարեր են: Սրա մեջ չկա վոչինչ

պախարակելի: Սա «յերազկոտություն» չե բառիս սովորական առումով. այդպիսի «յերազկոտություններ» խարազանում էր ինքը Վահան Տերյանը: Սա маниловщина չե: Վահան Տերյանը միանգամայն հեռու յեր հոգեկան տարտամությունից ու փխրությունից: Նրա ներքին աշխարհի կերտվածքը, ընդհակառակը, ուժեղ եր և լարված: Դրա ապացույցն և Տերյանի անդուլ աշխատանքը՝ նվաճելու գիտության այլ և այլ ասպարեզները: Նրա խիստ ու պահանջկոտ վերաբերումը դեպի իր սեփական ստեղծագործությունը, բան վորում միևնույն գործը տարիների ընթացքում փոփոխության եր յենթարկվում ու կատարելագործվում: «Ընձեռնավորի» թարգմանության ձեռնարկելը՝ գիտական մեծ նախապատրաստություններից հետո միայն: Նրա ներհուն դեմքը տուր ու հատատ արտահայտությունը: Վերջապես այն հանգամանքը, վոր նա մատնակցեց վերջին տարիների հեղափոխական մեծադղորդ դեպքերին. հեղափոխությունը գուցե և ամեն բան հանդուրժում է, բայց, համենայն դեպս, վոչ փխրություն: Յերգչանքներով ապրելն այլ կերպ պիտի հասկանալ: Փիլիսոփայական տերմիններով դա նշանակում է, ընդունել մի հոգեվոր կենտրոնի գոյություն, դեպի ուր ձգտում է տիյեզերքի ամբողջ համապատասխարը: Յերգչանքները, մարդկային ցնորքները, կարծես, յերբեմն, հպվում են այդ կենտրոնին, թափանցում նրա ծոցը մի վայրկյանով, սքանչանում, ապա նորից կորցնում նրան: Այդ պատճառով բանաստեղծի անրջանքների աշխարհը մտնում է փիլիսոփայի խնդիրը, ճշմարտության աշխարհին: Դրանք միևնույն են. միայն մեկը հասնում է նրան գերապանցարեն յուրատեսակ ներշնչումով, ինքնամոռաց եքստազով, մյուսը ավելի սառն՝ բանականությամբ շաղախված՝ ուղիներով:

§ 5. ՎԱՐՈՒԺԱՆԸ, ՓՈՒՉԱԿԸ ՅԵՎ ՏԵՐՅԱՆԸ:—Դանիել Վարուժանի ստեղծագործության պաթոսը բնդհանրությունն է: Զարթնումը, վորի մեջ խորհրդին նա ունկընդիր է դիշերները, արտիանքը, վորը նա փառաբանում է, մարմինը, վորին յերկրպագում է, այդ ամենը նրա համար ինքնանպատակ չե, այլ մի մի գրական կյանքի աճեցման ու հարատևության: Նրա համար արքատան են սերմն ու արգանդը, նա որհնելիս է սեռի ու նրա արտահայտումների լիությունն ու ճոխությունը, վերամհետև դրանք են վոր հայթանակելն հատատում են կյանքը: Բանաստեղծը վերահաս է ու ատոմածացնում է բնության մեծապուչ

գրենքը՝ իր նմանին ստեղծելու ընդունակությունը, նրա ոգին տնտասան արժատներով ու փարթամ ճյուղավորումներով: Վարուժանի համար սերը վոչինչ է առանց ծնունդի, համբույրը գոյություն չունի, յեթե նա սերմի առաջնորդը չէ: Ամենը հանուն բեղմնավորման ու կյանքի հավերժացման—ահա նրա հիմնական պավանանքը:

Նահապետ Քուչակի ստեղծագործության հիմնական մոտիվը յերկրային կոնկրետ սերն է: Նրա յարը վոչ յերազ է, վոչ էլ հեռուզգյակներում ապրող թագուհի: Նա իրենից շատ մոտ է գտնվում, հենց այն ավանում, ուր ինքն է ապրում: Բավական է վոր բանաստեղծը ելնի իր թաղից ու ահա նա կը տեսնի իր յարին կամ փողոցում, կամ հայրական տան դռանը, կամ թե մի ուրիշ մեծավոր տեղում: Քուչակը յերգում է իր յարի աչքն ու ունքը, շրթունքներն ու առամները, նրա մարմնի բոլոր բարեմասնությունները, նրա սիրուց բղխած համակ քաղցրությունները. այդ ամենը նա անհունորեն ազնվացնում է ու համակրելի դարձնում: Նահապետ Քուչակը վոգևորվում ու ասոված ացնում է իր յարին, բայց վոչ միայն չի տեղափոխում նրան յերկրից յերկինք, այլ մինչև անգամ դուրս չի հանում նրան իր փոքրիկ ավանից: Յարը միշտ նրա քովն է, միշտ նրա աչքի առջև, միշտ մարմնական՝ տեսանելի ու շոշափելի: Կոնկրետի այդ սահմաններումն է, վոր բանաստեղծը ստանում է և յերանություն, և գեղեցկություն:

Վարուժանը յելնում է յերկրի ստեղծարար ընդերքներից, նրա հզոր ասրերքից: Քուչակն անդադար հածում է կոնկրետի շուրջը. այդ կոնկրետն այնա՛ չունի Վարուժանի գույների փարթամությունը, քնքուշ է, մեղմ ու հանգստացնող: Միանգամայն այլ է Վահան Տերյանը: Հողը ձգողական չէ նրա համար, բեղմնավորման փիլիսոփայությունը՝ ոտար, կոնկրետը՝ մատնված ենուշադրության: Վահան Տերյանին հարազատ են գոյության վոչ թե այդ, այլ միանգամայն ուրիշ ասպեկտները:

Կինն իր գայթակղություններով, սեռն իր վախճանական արտահայտումներով, իբրև իրականության տվյալներ, անխուսափելի յեն Վահան Տերյանի համար: Այդ տվյալները պասիվ չեն, այլ, ընդհակառակը, ակտիվ, ներգործական, կանչող ու կանչերի համայքների հանդեպ բանաստեղծը զգում է իրեն միանգամայն թույլ ու պարտված: Կինը «կարող» է, նրա հրապուրը «անհաղթ» ու անող բանաստեղծին մնում է միայն հպատակվել նրան.

Յես քեզ մերժել չեմ կարող
յես ամեն ինչ կտամ քեզ (119)։

Սակայն այդ վերջնական հպատակություն չե։ Մճճվելով կնոջ ցանցերի մեջ, բանաստեղծը կրավորական չի մնում, այլ խստորեն դատում և ու գնահատում։ Ըստ այդ անողոք դատի կնոջ լեզուն «թունավոր» և, շրթունքները՝ «արյունատենչ», գգվանքն՝ «ահեղ», նրան ու տղամարդուն կապող խորհուրդը՝ «սև»։ Կինն արյունարբու յե և գիշատիչ։ Նրա ժպիտը նման և թունավոր ծաղիկների բույրի, վոր «տիրարար արբեցնելով մահ և բերում» (70), Նրա մարմնի խենթ սարսուռները «ախտաբորբոք արևներ են բոցավառում» (70)։ Կնոջ ցանկության փոթորկում բանաստեղծի անկարող հոգին «անեծք և թափում» ու «անհույս ճչում» (39)։ Կինը բերում է իր հետ «դառը ցնծության մի դող», նա խավարային և, անդնդային, մի սև անկում տղամարդու համար։

Մութ ցանկությամբ յես քո կանչող գիրկն եմ ընկնում,
ճետում եմ ցած վեհ բարձունքից հոգիս հպարտ (71)։

Կինը—դա ինքն ամենաշոշափելի ու ամենացայտուն իրականությունն և։ Կնոջ մոռենալ—դա նշանակում և մոռենալ իրականության ընդհուպ, բաց չթողնել նրա և յերազանքների միջև։ Իսկ իրականությունը մի բացարձակ սառնություն և՝ մահաբեր հոգու համար, մի անհոգի վոլորտ, վորի բրտության տակ ճմլվում և ամեն մի յերազանք։ Կինը մեծագույն չափերով ստանձնում և յերազապանի այդ դերը։

Բոլորովին ինձ քո հույզերով քաղցր ու անգութ,
մարիր իմ մեջ, մարիր իմ մեջ ցնորք ու հուշ··· (70)

Տերյանի գիտակցությունը քրիստոնեական և, ըստ վորում սերը վերջին իմաստով մեղք և։ Տերյանն ել յերգում և սերը, բայց դա ուրիշ սեր և, անմարմին, հրեշտակական, ուր մարդս կարծես մինչև անգամ ֆիզիկորեն կերպարանափոխվում և, ուրվականանում, ուր չկա վոչ բեղմնավորում, վոչ ծնունդ, վոչ ել մահ, այլ միմիայն՝ կյանքի սարսափներից վերացած՝ յեղեմական մի հավերժ յերանություն։ Բանաստեղծին յերևում են յերկնային եյակներ, դրախտի ճերմակ հագուստներ հագած, վորոնք անհուն միխիթարություն են բերում նրան, անմահական լույսեր սփռում նրա տանջված հոգում։

Մթնշաղային ժամերին···,
հայտնվում ես դու նուրբ ու լուսերես
ու հետս նստում քնքշությամբ անձայն—
և փայփայում ես, որորում ես քո
անխոս գգվանքով ամեն յերեկո··· (158)

Իրիկնաժամի կիսախավարում,
կապույտ լույսերի ցոլքերում նոճուն,
հայտնվում ե նա, մեղմագին փարվում,
գունատվում ե լուռ ու ել չի շնչում (179):

Հայտնվի՛ր լուսեղեն ու գեղող,
քո փայլը ծավալիր սև կյանքում,
ամոքիր գիշերներս անքուն
քո մաքուր, քո անուրջ յերգերով··· (156)

Վահան Տերյանը համակիր չե յերկրային հոսանուտ, դինամիկ սիրո կատուցվածքին, վորի սիրահարն եր Դանիել Վարուժանը: Անբավական, անեծքներ կարդալով, նա թողնում ե այդ բեղուն վայրերը, յերգում այլ սիրո մասին ու՝ միանգամայն բնականորեն՝ ընկնում քրիստոնեական ստատիկ, վերջնական բյուրեղացման յենթարկված արքայության գիրկը: Իսկ այդ արքայությունը պլատոնական իդեանների նույն աշխարհն ե, միայն շոշափելի դարձրած նկարագրով, կոնկրետացրած:

§ 6. ՄԱՆՈՒԿԸ:—*Անհասարակ Վահան Տերյանը մեծ չափերով հակված ե քրիստոնեական հոգեբանության: Հեզություն, խոնարհություն, անտրտունջ հնազանդություն—սրանք այն բարեմասնություններն են, վորոնց նա շատ հաճախ մեղմորեն յերգում ե: Տերյանի սրամտությունն ու թախիծն ել դերազանցորեն քրիստոնեական են. խորթ ու անհարազատ վայրերում դեգերող հոգու մի կարոտ ստ իր իսկական հայրենիքը:*

Վահան Տերյանի վերաբերումը դեպի յերեխաները՝ նորից քրիստոնեական ե: Մանուկն անմեղ ե, նրա հոգին ջինջ ե ու անարատ: Նրա անարատությունն ավելի կարող ե, քան մեծերի բանականությունը.

Լինեմ մանուկ, լինեմ մաքուր
մեր սրտերում պահեմ մի հուր,
խաղաղ մի լույս խավարում չար
գուցե բացվի գնդանն անդուռ:

«Գեղարվեստ», նո. 4

Բացված ծաղիկն իր վրա անհրաժեշտորեն բիծ պիտի ունենա, ապրած հոգին ճակատագրորեն ապիապատ պիտի լինի: Վահան Տերյանը սիրում է այն, ինչ վոր դեռ չի կորցրել իր նախնական ամբողջականությունն ու թարմությունը. չբացված ծաղիկ, չբ կիզված հոգի, խլրտուն մանուկ.

Ծաղիկներին դեռ չբացված, հոգիներին դեռ չկիզված
մանուկներին վառ–խլրտուն ասում եմ յես մնաք բարով...

Բաց ու զվարթ սրտով մանուկն ընդունում է այս կյանքը: Նրա հոգին անկաշկանդ է, ազատ, նա միաձույլ է ու ամբողջովին խինդ: Տերյանը տաժում է անհուն դորով դեպի նա.

Դու փոքրիկ, պայծառ աղջիկ ես,
դու արտուտ, վոսկե թռչնակ ես.—
չար ճետը թող չդիպչի քեզ,
աշունն ու ձմեռ չգա քեզ:

Մի փոքրիկ աղջկա ալբոմի համար,
«Գործ» 1917 թ., նո. 5—6

Մանկական հոգին անմիջական է, կենդանի ու զողզոջուն. ոչ ոչխարհների ծաղիկ է նա: Մանուկը նախակերպ է. նա կրում է իր մեջ յեղեմական իմացություն ու յերանություն: Վահան Տերյանի հոգում. անհուն խանդաղատանքի մի ապրյուր է նա:

§ 7. ՀԵՌՈՒՆԵՐԸ:—Վահան Տերյանն ունի հեռուների մի յուրատեսակ ընկալում:— «Կանչում ես անվերջ կապույտ հեռվից...», ասում է բանաստեղծը դառնալով մեկ անհայտ մի եյակի. այդ հեռուն մի «քաղցր» յերկիր է, «ուր բախտ է անանց, անանց ծպիտ,... ուր անմահական փառք է ու փայլ» (75): «Դու քո հեռու հեռավոր անհայտ յերկրում արդյոք ինձ մտաբերում ես այսոր այն վոսկեղեն աշխարհից» (84). ուղղված է իր սիրած աղջկան: «Բացել ես իմ դեմ վոսկեղեն հեռուն» (88)—ասում է բանաստեղծը, դառնալով գարնան: «Հեռու յերկրի լուսե հովտում որքան

ուրիշ յերգ են հյուսում» (83)։ *«Լռել է* հեռվում *յերգը* ցնծությանն» (133)։ *«Ցեվ վոչ մի* հեռվում լույս *չեյի փնտռում»* (141)։ *«Հեռավոր յերկրի պես* հմայող *է հոգիդ»* (153)։

Կան ուրեմն, ինչ վոր պայծառ հեռուներ յեղեմական թռվիչ հովիտներով, ուր ամեն ինչ հիացում է, ուր բանաստեղծը վորոնում է հավիտենական լույսեր ու խնդություններ։ Պարզ է, վոր բանաստեղծի մթնած հոգին պայծառացնող հայտնությունները այդ հեռուներից պիտի գան ու վոր նրա ըղձանքների և անուրջների բնակավայրը այնտեղ պիտի լինի։— «Հեռավոր քեզնից չեմ տրտնջում...» (61)։ *Հեռավորը բանաստեղծի ցնորքն է։ «Հեռավո՛ր, քեզնից ոչ չեմ աղերսում»* (62)։ *Հեռավորը լուսե անրջանքն է։ «Մի որ... կը գտնեմ ուղին* հեռավոր *քո տան»* (62)։ *այս տունը պատկանում է նրան, ով ունի «քրոջական գթություն» ու «սուրբ ծնկներ»։ «Քեզ եմ կանչում յես նորից, իմ* հեռավոր, *իմ* անգին...» (68)։ *«Հեռու յես անհաս, իմ* լուսե *յերազ...»* (82)։ *«Մ՞ամ համար եք դուք հնչում մեղեդիներ սգավոր.—արդյոք ո՞վ կա* հեռավոր, *վոր ձեր ցավով է տանջվում...»* (132)։ *Սա իր յերգերի համար է ասված։ մարդիկ անտարբեր են, նրանց հոգիները չեն արձագանքում այդ տխուր յերգերին։ հեռավորի նկատմամբ միայն պլպլում է մի փոքրիկ հույս։ «Հեռավոր կողմերից,* հեռավոր, *հայտնվի՛ր* լուսավառ...» (134)։ *Այս խոսքերը վերաբերվում են բանաստեղծի յերազին։ յերազը, վորի «անուշ գգվանքին», «մաքուր ու հոգեթով» համբյին կարոտ է բանաստեղծի սիրտը, վորի հայտնվելը «լույս արշալույս» է նրա մահատանջ հոգու համար, այդ յերազը գալիս է «հեռավոր կողմերից»։ ցանկալի՞ յեն այդ կողմերը Տերյանի համար։*

Յեթե հեռուն այդքան հոգեզմայլ է, յեթե այն մի վարդագույն յերկիր է հույսերի ու հայտնությունների, ապա թույլատրելի յե գործածել նրան և այլաբանորեն, իբրև նշանակ, կենտրոն այն ամենի, ինչ վոր սիրելի յե ու յերանելի հոգու համար։ «Վո՞ր կողմից յեկար դու, վորտեղի՞ց նետեցիր քո նետերը իմ հեռուն» (102)։ *այդ նետերը պատկանում են մի ռոմանտիկի, վորի կամքը «դիվային է», իսկ «գգվանքը չար ու ագահ»։ «Ցեվ իմ սրտի մեջ, այն խավարում էլ, մի քաղցր վիշտ է մեղմաբար խոսում։ մեկը այնտեղ իր* հեռուն *է վառել, վորպես յերկինքը ջրի ալմաստում»* (99)։ *«Դառը կյանքի խավարում, ուղիներում իմ դաժան սրտի թպտաց քո* հեռուն, *տխուր ծաղիկ, սև շուշան»* (174)։

Մոտիկը խայտաբղետ է ու քառագույն. իրերը դորչ են ու ցելտոտ, մի այլանդակ անկարգությամբ ցրված դես ու դեն: Ինչքան մենք հեռացնում ենք մեր հայացքն անմիջական շրջապատից, այնքան իրերն իրարուց բաժանող գծերն աննշմարելի են դառնում, ապա և խպառ չքանում, գույները խառնվում են միմյանց ու ամենը կամաց-կամաց սկսում է դալ մի հայտարարի: Շատ հեռուներում արդեն վերջնականապես վերացվում է ամեն մի խայտաբղետություն ու ամբողջը վերածվում է անդորր ու անհաս կապույտի: Մերձավորը բազմազան է, թերի ու պակասավոր: Հեռուն լի յե, հագեցած ու միասնական. նա պակասներ չունի, բոլորված է ու շրջափակված: Իր անհասությամբ, իր չեշտված հանգստությամբ ու ինքնամփոփությամբ հեռուն անմիջապես տանում է դեպի բանաստեղծի ըղձած դերդգայական կատարյալ աշխարհը ու այդ պատճառով էլ այդքան հաճելի յե նրա համար:

§ 8. ՑԵՐԵԿԸ. ՄԹՆԱՇԱՂԸ:—Իրերի աններդաշնակ բազմազանությունն ամենից ակնհայտնի դրսևորում է ցերեկը: Նա խայտաբղետ է վոչ միայն մեր տեսանելիքի, այլ և մեր լսելիքի համար: Ցերեկն աղմկոտ է. բանաստեղծի վերաբերումը դեպի այդ աղմուկը բացասական է: «Նորից կթողնեմ քաղաքն աղմկոտ...կմոռնամ հեռվի աղմուկը ահեղ...» (23). «Շուտով կլռե աղմուկը դաժան...» (27). մթնշաղում չկա «աղմուկի բեռ» (52). «Դիշեր է իջել. լռել են բոլոր աղմուկները չար...» (97). յերեկոյան դեմ «մեռնում են ճիչերը շփոթ աղմկոտ քաղաքի մարտկոցում» (187)—ասում է Տերյանը այլ և այլ տեղերում: Ցերեկը հուզված է ու ակտիվ. նա անդադար լարվում է ու ձգտում. նա ցանկանում է հասնել, բայց դեռ չի հասել: Ցերեկը թերի յե, անկատար, անինքնամփոփ: Նա մեզ չի տանում դեպի պայծառ հորիզոններ, այլ շարունակում է պահել մինչև ուշ դդայական պակասավոր աշխարհի սահմաններում: Այդ իսկ պատճառով էլ Տերյանը չի սիրում, անդիտանում ու անուշադիր է թողնում նրան: Մի անգամ միայն բանաստեղծն ասում է, վոր ինքը «հալիության դժգոհ» է «ցուրտ ցերեկներից»:

Ցերեկն անախորժ է Վահան Տերյանի համար: Ցերեկվա դանդաղ մահացումը, վորին նա զանազան անուններ է տալիս՝ մթընշաղ, իրիկնաժամ, գիշերամուտ, յերեկո, ընդհակառակը, շատ սիրելի ու ցանկալի:— Որվա այդ պահի հետ է կապում բանաստեղծն այն ամենը, ինչ վոր ամենից արժեքավորն ու ներհունն է

իր համար: Իր հոգու դանձերը՝ անուրջները, գերազանցորեն «մթնշաղի» անուրջներ են. իր ըղձած հեռավոր յերկիրները՝ «իրիկնային» յերկիրներ. իր փայփայած աղջկա յերդը՝ «իրիկնաշունչ» յերգ. իր տենչած մոռացումը՝ «իրիկվա» մոռացում:—Մթնաշաղի հետ միասին սկսում են յերևալ վոչ միայն յերկնքի, այլ և բանաստեղծի հոգու աստղերը: «Իրիկնաժամի կիսախավարում, կապույտ լույսերի ցոլքերում ճոճուն, հայտնվում է նա...» (179). դա իր տեսիլանման սիրածն է: «Կապույտ ծածկոցն ինչպես ցած—մեղմ ու անուշ իրիկո՛ւն. վառիր լույսդ, վաղ անցած, լուսե ցնորք իմ հոգում» (178): «Իմ խաղաղ յերեկոն է հիմա... քեզ յերբեք սիրաս չի մոռանա, իմ մաքո՛ւր, առաջին իմ անուրջ...» (81):

Ի՞նչն է այդպես սերտ կապում Վահան Տերյանին մթնշաղի հետ:—Մթնշաղը նուրբ է, քնքույշ ու մեղմ. նրա քայլերը փափուկ են, նա գալիս է անձայն ու անաղմուկ. նա ստվերի յե վերածում ամեն ինչ, ամբողջ աշխարհը դարձնում թեթև ու կարծես անյութ: Իր այդ հատկություններով, մթնշաղը փարատում է ցերեկվա մղձավանջները, փաղաքշում մարդուս, հանգստացնում նրա հուզված հոգին ու հաշտեցնում կյանքի հետ:

Մթնշաղը բերում է իր հետ մի յեթերային նինջ, վորի զգվոց ալիքների վրա որորվում է և վոդջ բնությունը, և մարդս.

Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ,
ննջեցին անուշ յերկինք ու յերկիր... (54)
. . . . թվում է, վոր անեզր է ամեն ինչ—

ու վոդջ կյանքդ է մի անսահման քաղցր նինջ...(52)

Անուշ ու համատարած նինջը հեռացնում է մեզ իրականությունից, տանջված մարդուն տալիս առորյայի մոռացում, կերպարանափոխում, հեքյաթացնում ամեն ինչ ու ոնմիջապես տանում դեպի ցնորքների աշխարհը.

Յես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
յերբ ամեն ինչ յերազում է հոգու հետ
յերբ ամեն ինչ խորհրդավոր ու խոհուն,
ցնորում է կապույտ մութի աշխարհում... (52)

Մթնշաղը անհունապես լայնացնում է բնության սահմանները—

Մարգերում իջավ թովիչ կիսամութ,—
աշխարհը նորից խորունկ է և լայն—

ու հալցնում մարդուս ներաշխարհը սեղմող կապանքները. հոգին ազատվում է, նրա բոլոր յերազներն ու հուշերը խառնվում է իրար, նրանից սկսում են յելնել ինչ վոր անտեսանելի ալիքներ, վորոնք թափանցում են իրերի ընդերքները, մարդ սիրտը պարզում և բնության բոլոր՝ թե՛ մեծ, թե՛ փոքր՝ հատվածներին ու սքանչացած լուծվում տիեզերական խորհուրդների մեջ.

Լսել ես արդյոք այս յերգը դյութող,
յերբ այրում է քեզ մի անուշ թախիծ,
յերբ քարն ես գրկում, որ հնում ջուր ու հող,
յերբ հեկեկում ես անբարբառ բախտից··· (146)

Մթնշաղը լռեցնում է սին ձայները, լուծում աչք ծակող սահմանները. նա ամեն ինչ բերում է մի քնքույշ միավորության: Նա տալիս է մեզ համասիրություն ու նինջ, ցանկալի մոռացում ու անվերջ յերազներ: Նա պոկում է մեզ այլանդակ իրականության մակերեսից ու բարձրացնում դեպի մի որորող անհունություն, վորի ծալքերում նիրհում են վոսկե կյանքի անակնկալներ: Նա ավարտված չէ, բայց գնում է դեպի ավարտում: Նա ամփոփված չէ, բայց շեշտակիորեն ընթանում է դեպի ամփոփում: Սակայն այդ ամփոփումը հեռուների անշարժ ու շրջապատված ամփոփումը չէ. սրա մեջ ավելի շունչ ու կենդանություն կա, սա ամփոփում է անծայրածիրության մեջ, սրա փեշերը կորչում են անհուններում: Իր այդ հատկություններով, մթնշաղը անմիջապես տանում է դեպի բանաստեղծի ըղձացած ճաճանչավոր աշխարհները. ու դա ավելի լայնատարած հուներով, քան հեռուները. այդ պատճառներով մթնաշաղը այդքան մոտ է ու թանկ Վահան Տերյանին ու կազմում է նրա ներշնչման ամենատատ աղբյուրներից մեկը:

§ 9. ԳԻՇԵՐԸ:—Ցերեկը տեղի յե տալիս մթնշաղին, մթնշաղը գիշերին. տեսնենք ինչ վերաբերում է ցույց տալիս Տերյանը գեպի վերջինս:

Իր «Հրաժեշտի գազելում» նա ասում է.

Մարգարտաշար իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտուտներին վոսկե արտում ասում եմ յես մնաք բարով···

Մարգարտաշար հուշերը բանաստեղծի հոգու ամենից ներհուն զարդերն են. փշերը՝ գիտակցության գերազույն հպարտանություն, վորի ծալքերում նիրհում են վոսկե կյանքի անակնկ-

ջը. վոսկե արտի արտուտները՝ ինքը կյանքն իր համակ խնդությունները։ Այդ ամենի հետ միասին գրվում է և գիշերը։ Ըստ յերևույթին, գիշերն ել այնքան մոտ է ու սիրելի բանաստեղծի սրտին, վորքան և հուշերը, փշերը և արտուտները։

«Գիշեր և հուշեր». այդպես է կոչում Վահան Տերյանն իր բանաստեղծությունների մի փունջը։ Սա յերկրորդ անգամն է, ինչ բանաստեղծը յերկու այդ հասկացողությունները մտերմորեն հարակցում է իրար։ Առաջին անգամ նա այդ արավ—ինչպես տեսանք—«Հրաժեշտի գաղելում», յերկրորդ անգամ նա այդ կանե—ինչպես կը տեսնենք—«14 տող» բանաստեղծության մեջ։

«Հրաշք-աղջիկ» վոտանավորում Տերյանն ասում է.

Հրաշք-աղջիկ, *գիշերների* թագուհի...
Հրաշք-աղջիկ, *ցնորքների* դիցուհի... (33)

Նա, վոր իշխում է ցնորքների մոգական աշխարհում, նա—միևնույն ժամանակ—իշխում է և գիշերների վրա։ Կա, ուրեմն, խորունկ աղերս և համարժեքություն գիշերի ու ցնորքների պայծառ աշխարհի միջև։

Այնուհետև մեզ հայտնի յե դառնում գիշերվա մի շարք այլ հատկությունները. նա «խորհրդավոր» է և «դյութական» (67), նա տանում է դեպի ինքնորոշում և հանդարտություն (97), մեղմությունը նրա ամենից գլխավոր հատկանիշն է.

Դու խոսում ես, բայց կարծես.
դու չես, գիշերն է յերգում.
այնքան նուրբ ես և այնպես
մեղմ ես, մեղմ ես ինձ գրկում... (162)

Իմ մոլոր նամբին դու անկարծ իջար
քո գիշերային մեղմաշունչ մութով... (58)

Յես լսում եմ հիացմունքի մի շշուկ,
արդյոք դու յես նորից հոգիս մեղմ հուզում.
—այն գիշերն է, այն հուշերն են տրտմաշուք... (67)

«Զմրան գիշեր» բանաստեղծությունից ակնհայտնի յե դառնում, թե ինչ հոգեկան դրության է բերում գիշերը Վահան Տերյանին։— Ինչպես մեծ քաղաքի բարձր տների պատուհաններում պայծառ լույսերը սկսում են մեկ-մեկ հանգչել ու ամբողջը սուզվում է մշուշի մեջ, այնպես ել մտապատկերները մեկ-մեկ

ակտում են անհայտանալ բանաստեղծի գիտակցության հորիզոնից, նրա հոգին մշուշապատվում է, նա կորցնում է «այսոր» և «յերեկը» իրարուց տարբերելու ընդունակությունը և ընկնում մոռացության մեջ. «վոչինչ չեմ հիշում, վոչինչ չեմ հիշում...»— ասում է նա: Գիշերն ապատում է բանաստեղծի գիտակցությունը ցերեկվա զգոնությունից, ուր ամեն ինչ բաժան-բաժան է, պարզ ու կոնկրետ: Նա հոգին բերում է մի հայտարարի, մի միավորի:

Գիշերը ցերեկվա հակադրությունն է: Նա անաղմուկ է ու պասսիվ. չկա հուզում, չկա ձգտում. ամեն ինչ խոր քնի ու մոռացության մեջ է: Ցերեկը յերախը բաց վխտում է ու վորոնում. գիշերը կծկված է ու ամփոփված: Վոչ միայն ֆիզիկորեն, այլ և մետաֆիզիկորեն գիշերը մթնշաղի շարունակությունն է. գիշերը մթնշաղի պես յերազկոտ չե, բայց նա ավելի կայուն է ու կատարյալ: Իր վերջավորվածությամբ ու ինքնապարփակությամբ նա առնչանում է նոումենների աշխարհին, վորի սահմաններին և միշտ հասնում Վահան Տերյանի հոգու մխումները. այդ պատճառով գիշերն այդքան համակրելի յե բանաստեղծի համար:

§ 10. ԱՇՈՒՆԸ:—Վահան Տերյանի գիտակցության ու աշնան միջև կա մի խորունկ աղերս: Աշնան «յերգը թախծալի իմ սրտի յերգն է»—ասում է բանաստեղծը: Աշնանային դալուկ տերևները հեզ ու հանդարտ սավառնումով ընկնում են գետին. դա բանաստեղծի յերազներն են, վորոնք՝ գունատ՝ անաղմուկ լքում են իր հոգին: Կանաչ ծառը կամաց-կամաց մերկանում է ու անտրտունջ հպատակվում իր ճակատագրին. դա բանաստեղծի զարդ ցնորքներ կորցրած հոգին է, վորը խոնարհվում է անհույս գալիքին: Վահան Տերյանի համար սիրելի յեն աշնան «թախիծը անհուն», «տխրանքը հեզ», նրա «դյութանքը մեղմ խոսքի», նրա «արցունքները գոհար...»

և թփերը դողդողջուն
և խոտերը գետնահար...

Վահան Տերյանի վերաբերումը դեպի գղյական աշխարհը բացասական է: Բայց չնայած դրան, այդ աշխարհում նա գտնում է այնպիսի դրվագներ, վորոնք սիրելի յեն ու ցանկալի իր համար: Դրա պատճառն այն է, վոր այդ դրվագներն իրենց վորոշ հատկություններով նմանվում են գերզգայական գոյության. նրանք հիշեցնում են այդ գոյությունը: Այդպիսով, վերհուշը Վահան Տեր-

յանի ստեղծագործության հիմնական մոմենտներից մեկն է: Սրանից անմիջապես բղխում է այն մտերմությունը, վորը կա բանաստեղծի ու աշնան միջև: Տարվա այդ յեղանակն, ինքնին, վերհուշի մի մարմնացում է: Ծաղիկները թոշնեցին, ճաճանչները անդարձ նսեմացան. մահամերձ կանաչները խոսում են այն մասին, վոր մի ժամանակ լի եյին կյանքով: Աշունը չի ամփոփվում իր մեջ. թախծի ու դալկության շեղջերի միջից ցոլում է հույսի ու մխիթարության հեռավոր ճառագայթները. հոգին լցվում է հրաշքի ու հայտնության մի աղոտ սպասումով:

«Աշուն» բանաստեղծության մեջ Վահան Տերյանն ասում է.

Միգում շողաց մի ցուրտ լույս.
— ո՛, արդյոք կա՞ վերադարձ: (11)

«Աշնան գիշեր» բանաստեղծության մեջ մենք կարդում ենք.

Ա՛խ, բոլոր կողմերում է թախիծ,
ամե՛ն տեղ է փռված տրտմություն.
յեվ արդյոք՝ վորտեղի՞ց, վորտեղի՞ց
սպասեմ ավետիք ու խնդում. . (103)

«Աշնան առավոտու յերգը» վոտանավորի մեջ բանաստեղծն ասում է.

Մութ է հոգիս հոգնաբեկ,
թախիծով լի և անհույս.—
հրաշքով դու այսոր յեկ
ժպտա՛, վորպես արշալույս: (123)

Աշունքից Տերյանն անցնում է վոչ թե նրա անմիջական նախատիպարին, որինակ ամառվանը, այլ առհասարակ նախատիպարներին: Զգայականից բանաստեղծը չի անցնում նորից զգայականին, այլ՝ գերզգայականին: Սրա մեջ է արտահայտվում Տերյանի գիտակցության տիեզերականությունը:

§ 11. «ՄՈՌԱՑՎԱԾ ՈՒՂԻՆ»:—Վահան Տերյանն ունի մի բանաստեղծություն «Մոռացված ուղի» անունով (92): Այդ վոտանավորում բանաստեղծը պատմում է մի քնքուշ թաղուհու մասին, վորն ապրում է հեքյաթային հեռուներում ու աշնաեղից գիշեր-ցերեկ կանչում նրան: Բանաստեղծը, հմայված այդ կանչերով, թողնում է իր առոյգ, սովորական վայրերը, յուսեղեն

ամպի պես պատնում դեպի կախարդ տիրուհու ապարանքները ու՝ մոռացված և վերացած՝ փարում, փայփայում նրան: Դա առաջներումն էր: Այժմս, բանաստեղծն այլևս չգիտե այն լուսե ուղին, վորը տանում էր դեպի քնքուշ թագուհու դղյակը. զգում է միայն, վոր թագուհին իր վոսկե հեռուներից շարունակում է անդադար կանչել ու հմայել նրան:

Կա յերկու աշխարհ. առորյա և վոչ առորյա, սովորական և անսովոր: Սովորական աշխարհին տիրանալու համար կարիք չկա ուժ կամ լարում գործադրել. նա տրվում է մեզ հեշտորեն, հենց այնպես, վոչ իրրև շնորհք: Անսովոր աշխարհին տիրանալու համար անհրաժեշտ է, վոր հոգին ունենա առանձին հատկություններ, առանձին թևեր. դա շնորհք է, վորը տրվում է վոչ ամենին, և միևնույն մարդուն վոչ ամեն ժամանակ: Բանաստեղծը մի ժամանակ ուներ այդ շնորհքը ու ապրում էր հոգեկան արտասովոր հարուստ կյանքով. այժմ նա կորցրել է այդ շնորհքը, բայց չի մոռացել նրա պարգևած բոլոր բարձր տեսակի բարիքները: Սա յև «Մոռացված ուղիի» իմաստը:

«Դավաճան հուշեր» բանաստեղծության մեջ Վահան Տերյանն ասում է.

Անվերջ գիշերիս անամոքական մենակության մեջ
յետ կանչեցի քեզ, անդարձ ուրերի ցնորուտ յերկիր,—
ուզեցի վոր դու պայծառ ու մաքուր լույսերով անշեջ
յեվ խորհուրդներով դյուրես վերստին սիրտս տարագիր:

. . . . . .

Դառը մենության և անհուսության մթին վիհերում
յես իմ թույլ սիրտը կամեցա քաղցր հուշով ամոքել··· (126)

«Մոռացված ուղիից» կարելի յե ստանալ այն տպավորությունը, իբր յերկու աշխարհներն անդարձ բաժանված են իրարուց ու ընդհանուր վոչինչ չունին: Սակայն դա այդպես չե. նրանք սկզբունքորեն տարբեր են, բայց վերջնականապես չեն անջատված իրարուց: Նրանք հաղորդվում են իրար. առորյա շրջապատն իմաստաբանվում է վոչ առորյայից ինված լույսերով: «Ցնորոտ յերկիրն» ու «Հուշերն» ունին մի մոգական ուժ՝ ցրելու յերկրի բոլոր սարսափները: Սա արտահայտվում է վոչ միայն «Դավաճան հուշերի», այլ և շատ ուրիշ բանաստեղծությունների մեջ:

Յերբ բանաստեղծի հոգին լցված է վերին շնորհքով, նա խընդում է ու զվարթ ընկալում այս աշխարհը: Բայց յերբ այդ շնորհ-

քի աղբյուրն սկսում է ցամաքել, բանաստեղծը մոլորվում է՝ կորցնելով յերկրային հակասութիւններն ու մճիճները փարատող վերին սկզբունքներն, աշխարհը մթնում է նրա համար ու վերածվում մի հովտի, ուր վոչինչ չկա, բացի չիկացած լերկ ժայռերից: Վոչինչ այլևս չի մխիթարում բանաստեղծին. ամեն տեղ թակարդներ են լարված, ամենը չար է ու անիմաստ: Հեռուները մնջացել են, գիշերները սևացել ու բանաստեղծի խեղճ հոգին խելահեղորեն թպռտում է անհուսության ճիրաններում:

§ 12. ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ:—Փիլիսոփայի աշխարհայեցողությունը հոգեբանորեն կառուցվում է նրա հիմնական ընկալումների վրա: Գոյության այդ ընկալումները գիտակցության ծնունդ չեն, այլ, ընդհակառակն, ընթացք են տալիս գիտակցական կյանքին. նրանք անմիջական են, նախակերտ: Փիլիսոփան տրամաբանում է նրանց, ստեղծում դատողությունների կուռ շարքեր ու այդպիսով կառուցում իր աշխարհայեցողության շինվածքը:

Միանգամայն նման փիլիսոփայի, բանաստեղծն ել ունի գոյության իր հիմնական ընկալումները: Բայց բանաստեղծը աշխարհայեցողություն չունի փիլիսոփայի իմաստով: Նրա ընկալումները յերբեք չեն հայտաբերվում իբրև մի տրամաբանական միություն: Բանաստեղծի աշխարհընկալման տարրերը թաղնված ու թաղված են նրա գործերի խորքերում: Գլխավորապես ուրիշները, շատ քիչ դեպքում ինքը բանաստեղծը, կարող են իրենց նպատակ դնել՝ դուրս կորզել այդ տարրերը թաղստատեղերից, շաղախել նրանց տրամաբանական շաղախով ու ապա առաջադրել իբրև մի վերջնական ամբողջություն:

Բանաստեղծի—ինչպես և փիլիսոփայի—ընկալումները՝ նրանց ճակատագիրն է. սահմաններ, վորոնց նա յերբեք չի կարող վտանգիս անել. պատեր, վորոնք գծագրվում են ազատ, բայց և անանցնելի յեն: Վորքան բանաստեղծը հանճարեղ է, այնքան նրա ընկալումների ճակատագրականությունը հայտաբերվում է վորոշ ու հստակ: Չնայած այդ ճակատագրականության, իր ընկալումների վոլորտում բանաստեղծը վորևե ճնշում չի զգում. այդպես է թվում միայն մեզ, նրանց, ովքեր նայում են բանաստեղծին արտաքուստ: Ներքուստ, իր գիտակցության սահմաններում, բանաստեղծը վերահաս է ինչ վոր ռիթմի ու ներդաշնակության, վորը և նա դրսևորում է իր կերտվածքներում:

Արդ՝ վո՞ւր և Վահան Տերյանի հիմնական ընկալումը։

Մեր բոլոր ասածներից հետո անսպասելի չպիտի լինի, յեթե մենք պատասխանենք, որ ըստ Վահան Տերյանի հիմնական առումի կա յերկու տեսակի գոյություն. ճանաչավոր և անճանաչ։ Ճանաչավոր գոյությունը հարուստ է ու լի իմաստով. անճանաչ գոյությունն աղքատ է ու սակավիմաստ։ Ճանաչավորը տոնական է ու լուսալիր, անճանաչը՝ սովորական ու գորշ։ Առաջինը գրժվարամատույց է, նման բյուրեղյա ապարանքների՝ բնակվող գեղեցկուհու, յերկրորդը մատչելի յե միանգամայն ու—նման չար ճակատագրի—միշտ տնկված մեր առջև։ Առաջինը գոյության խնդությունն է, յերկրորդը՝ նրա տաղտուկը։

Այդպես և պատկերվում գոյությունը Վահան Տերյանի գիտակցության մեջ, որը հետևապես ճեղքված է, յերկուական, ինչպես ճեղքված ու յերկուական են բոլոր միստիկական ու իդեալիստական վարդապետությունները։ Արտահայտելով այդ պատկերացումը փիլիսոփայական լեզվով, ուրեմն, մասամբ աղճատելով այն (այսինքն պատկերացումը), մենք կարող ենք ասել՝ ըստ Վահան Տերյանի կա յերկու տեսակի գոյություն, զգայական և զերզգայական, իմմանենտ և տրանսցենդենտ, ֆենոմենալ և նոումենալ։ Յերկու այդ գոյությունների հատկություններով բացատրվում է Վահան Տերյանի ստեղծագործության բոլոր յելևեջները։

§ 13. «ԱՇՆԱՆ ՅԵՐԳԸ»՝ ԱՌԱՋԻՆ ՏՈՒՆ։—Վահան Տերյանի «Աշնան յերգ» խորագիր կրող հետևյալ բանաստեղծությունը՝

Ցրտահա՛ր, հողմավա՛ր,
դողացին մեղմաբար
տերևները դեղին,
պատեցին իմ ուղին...

Ճանապարհները թոշնան...
Կանաչներս աշնան—
իմ խոհերը մոլար՝
ցրտահա՛ր, հողմավա՛ր...

Կրակներս անցան
ցուրտ ու մեգ է միայն...
Անուրջներս յերկնածին
գնացի՛ն, գնացի՛ն... (17)

Վերլուծենք այս վոտանավորը։—Առաջին չորս տողերում, բանաստեղծը պատկերում է արտաքին աշխարհը։ Բանաստեղծի գիտակցության համար նյութի այդ աշխարհը մի միատարր զանգված չէ, այլ բազմատարր, շերտավորման յենթարկված մի տապարեզ, ուր ամեն մի դասավորում ունի իր ուրույն արժեքը։ Առաջին տողով

Ցրտահա՛ր, հողմավա՛ր...—

—բանաստեղծը դաղափար է տալիս այն մասին, վոր արտաքին աշխարհում կան ինչ վոր բացասական, չար սկզբունքներ՝ ցուրտ, հողմ, վորոնք սակայն այս մոմենտում մեր անմիջական շրջապատում չեն, այլ գործում են ինչ վոր մոտյլ հեռուներում ու մեր աչքի առաջ են միմիայն նրանց գործունեության տխուր գոհերը։ Ցերկրորդ և յերրորդ տողերով

Դողացին մեղմաբար
տերևները դեղին...—

—բանաստեղծն անցնում է արտաքին աշխարհի կոպիտ տարրերից նրա քնքույշ ու մեր սրտին սիրելի մոմենտներին։ Դեպի այդ հեզ, ճակատագրին հնազանդ ու տահուն աններդաշնակությամբ պատվող տերևները, բանաստեղը տածում է մի ինչ վոր տեր ու անհուն արդահատանք, կարծես իր իսկ սրտից դչլտված յինին նոքա։ Վերջապես չորրորդ տողով

պատեցին իմ ուղին...—

—բանաստեղծը դաղափար է տալիս արտաքին աշխարհի ամենաշոշափելի մոմենտի՝ իր նյութական յենի մասին։

Բանաստեղծն ատիճանաբար անցնում է արտաքին աշխարհի բացասական ու անտեսանելի հեռուներից, նրա արժեքավոր ու անմիջական մոտերին, ապա—արդեն առանց գնահատման—կանգ առնում նույն աշխարհի ամենակոնկրետ ովյալի՝ իր մարմնի՝ վրա։

§ 14. «ԱՇՆԱՆ ՅԵՐԳԸ». ՅԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՆ։— Անցնենք յերկրորդ տանը.

Ճանապարհները թաշնան...
կանաչներս աշնան—
իմ խոհերը մոլար՝
ցրտահա՛ր, հողմավա՛ր...

Առաջին տողը՝

Ճանապարհները թռչնաց...

—մի դառն ափսոսանք է։ Այն, վոր պայծառ էր, այժմ դալուկ և և թառամ։ Պարզվում է, թե ինչու բանաստեղծը հիվանդ սեր և տածում դեպի աշնան դեղին տերևները։ Նրանք հիշեցնում են իրենց ճաճանչափայլ նախկինը. նրանք անկենդան թոթովանքն են կենդանի անցյալի. նշանակներ այլ սեռի գոյության, ավելի բարձր ու ներդաշնակ։ Ցերկրորդ և յերրորդ տողերով՝

Կանաչներս աշնան—
իմ խոհերը մոլար...—

—բանաստեղծն անցնում է արտաքին աշխարհի պատկերացումից դեպի ներքին աշխարհի պատկերացումը։ Արտաքին աշխարհում նրան շրջապատում են տերևները, ներքին աշխարհում նրան պաշարում են իր խոհերը։ Տերևներին նա անվանում է դեղին, իր խոհերին նա տալիս է կանաչներս աշնան անունը. իսկ աշնանային կանաչը մեռնող է, նրա գույները դալկացած։ Մեռնող տերևները մեղմ աններդաշնակությամբ խռնված են բանաստեղծի չորս կողմը. բանաստեղծի խոհերը, վորոնց նա մոլար է անվանում, միևնույն մեղմ ու դգվող անկարգությամբ չվարված պտտվում են նրա ներաշխարհում։ Այդպիսով, յերկու աշխարհների միջև բանաստեղծը հաստատում է մի զուգահեռություն։

Բանաստեղծը մի անգամից չի անցնում արտաքին աշխարհից ներքին աշխարհին։ Նրանց միջև նա մտցնում է կամրջող մի տարր, վորը մեզ հայտնի ճանճանչները թռչնաց... տողն է։ Այդ տողը հավասար կերպով վերաբերվում է և արտաքին աշխարհին՝ տերևներին, և ներքին աշխարհին՝ խոհերին։ Սակայն, տերևներն արտաքին բազմատարր աշխարհի լոկ մի մոմենտն են, իսկ խոհերը ներքին միատարր աշխարհն են իր ամբողջությամբ. Բանաստեղծի ուղին, կատարելիքը, այդպիսով, զգալի կերպով անձկանում է։ Դրա պատճառն այն է, վոր արտաքին աշխարհը մի միջոց է բանաստեղծի համար, իսկ ներքինը՝ նպատակ։ Առաջին աշխարհը ծառայում է իբրև պատվանդան յերկրորդի կոթողը կանգնեցնելու, իսկ կոթողը միշտ ավելի անձուկ է, քան պատվանդանը։

Ցերկրորդ տունը բանաստեղծը վերջացնում է նրանով, ինչով վոր սկսում է առաջինը, այսինքն՝

Ցրտահա՛ր, հողմավա՛ր...

տողով: Սակայն, այդ տողն այժմս այն չե, ինչ վոր առաջ: Անցնելով արտաքին աշխարհի դասավորումները, ապա մտնելով ներքին աշխարհի վոլորտները, նա անխուսափելիորեն մեղմացել է, կորցրել իր թարմությունն ու անմիջականությունը և դարձել լոկ այլաբանություն, սահմանված ընդդծելու բանաստեղծի խոհերի շվար ու մոլոր կացությունը:

§ 15. «ԱՇՆԱՆ ՅԵՐԳԸ». ՅԵՐՐՈՐԴ ՏՈՒՆ:—Յերրորդ և վերջին տունն այս է.

Կրակներս անցան,
ցուրտ ու մեզ է միայն...
Անուրջներս յերկնածին
գնացի՛ն, գնացի՛ն...

Ճանանչ, նանանչավոր և այլն բառերը վերաբերում են արտաքին աշխարհին: Ի հարկե նրանց կարելի յե դործածել և ներքին աշխարհի նկատմամբ, սակայն դա միայն այն չափով, վոր չափով մեր կամքն ու ուշադրությունը լարում ենք այդ ուղղությամբ. Հենց վոր այդ լարումը թուլանում և կամ վերջանում, բառերն էլ բնականաբար թողնում են ներքին աշխարհի ոտար վայրերը և փոխադրվում հարազատ արտաքին աշխարհը: Այդ պատճառով նանանչները թոշնան... տողը տեղին և դործածել—ինչպես և դործ է ածում Տերյանը—արտաքին աշխարից ներքին աշխարն անցնելու ժամանակ և վոչ ընդհակառակը:

Այս նկատողություններից հետո, անցնենք վերջին տան առաջին տողին.

Կրակներս անցան...—

—կրակ բառը, ի հարկե, առաջ ու առաջ վերաբերում է արտաքին աշխարհին: Սակայն, շատ սովորական բան է փոխաբերաբար դործածել նրան և ներքին աշխարհի նկատմամբ: Բանաստեղծության ամբողջ հյուսվածքից պարզ յերևում է, վոր Կրակներս անցան տողը, իսկապես վերաբերում է ներքին աշխարհին: Բայց ներքին աշխարին էլ վերաբերվելով՝ այդ տողն, այնուամենայնիվ, չի խզում մեզ արտաքին աշխարհից, վորովհետև հոդեբանորեն յելնում է նրանից ու հետևապես անխուսափելիորեն պատկերում նրան իր մեջ:

Ցերկրորդ՝

Ցուրտ ու մեգ է միայն...—

տողը, ի հարկե, նորից վերաբերում է ներքին աշխարհին: Սակայն, ցուրտ ու մեգ բառերի մասին, մենք պիտի ասենք այն, ինչ վոր արդեն ասել ենք ճանճանչ բառի մասին. վոր նրանք, առհասարակ, վերաբերվելով արտաքին աշխարհին, ներքին աշխարհի նկատմամբ կլիրառելի յեն միայն վորոշ լարումից հետո: Նախորդ տողի հետ համեմատած, այդ տողը զիջում է արտաքին աշխարհին, արտաքինից դեպի ներքին ընթացքի թուլացում: Նույնը կարելի յե ասել և վերջին այս յերկու տողերի մասին, միասին վերցրած ու համեմատած յերկրորդ տան հետ: Խոհեր—կրակներ—ցուրտ ու մեգ—դա իսկապես մի ատիճանական անկում և ներսից դեպի արտաքին, վերից դեպի վար: Բանաստեղծը, կարծես, դժվարությամբ և կտրվում արտաքին աշխարհից ու անդադար զիջումներ անում նրան. սակայն, այդ զիջումները հենց այստեղ ել դանում են իրենց վախճանը: Վերջին յերկու տողերով

Անուրջներս յերկնածին,
գնացի՛ն, գնացի՛ն...—

—բանաստեղծը հավաքում է իրեն, անդարձ թեակոխում ներքին աշխարհը և ՝ուզվում նրա խորքերը:

Յեթե ճանճանչները թռչնան... տողն ամենից առաջ վերաբերվում է արտաքին աշխարհին ու վորոշ լարումից հետո միայն և ներքին աշխարհին, յեթե կրակներս անցան տողը, բնականաբար, առանց վորևե լարումի տեղավորվում է և՛ արտաքին, և՛ ներքին աշխարհներում. ապա անուրջներս յերկնածին տողը վերաբերվում է միմիայն ներքին աշխարհին: Ի հարկե, անուրջ բառը չարծածելի յե և արտաքին աշխարհի նկատմամբ. անուրջ են կոչում բոլոր սիրահարները իրենց տարփածուներին: Բայց դա միայն այն չափով, վոր չափով մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք այդ ուղղությամբ. հենց վոր այդ կենտրոնացումը թուլանում է կամ վերջանում, այդ բառն ել թողնում է արտաքին աշխարհի ոտար ասպարեզները և անցնում հարազատ ներքին աշխարհը: Անուրջ բառի նկատմամբ, մենք—հակառակ կարգով—ասացինք այն, ինչ վոր ասել ենք ճանճանչ բառի նկատմամբ. այդ յերկուսի մեջտեղը գրավում է կրակ բառը: Սակայն անուրջներս յերկնածին տողն ավելի յե, քան այն, ինչ վոր

արդեն ասվեց նրա մասին: Բանաստեղծի անուրջները հատարակ անուրջներ չեն, այլ յերկնածին, յերկնային ծագում ունին: Յերկինք հասկացողության հետ մարդիկ կապում են մի շարք բացարձակ գաղափարներ. կատարյալ մաքրության, հավիտենականության, անչիջության և այլն: Ուրեմն, անուրջներս յերկնածին տողով, բանաստեղծը վոչ միայն անվերադարձ սուզվում է ներքին աշխարհի խորքերը, այլ և մի քայլ ել գնում և անում. նա բաղխում է պլատոնական իդեաների, անփուտ աշխարհների դռները:

§ 16. «ԱՇՆԱՆ ՅԵՐԳԻ» ԸՆԹԱՑՔԸ:— «Աշնան յերգ» վոտանավորի առաջին և յերկրորդ տները կազմում են նրա առաջին շրջանը, ցիկլը. այստեղ բանաստեղծն անցնում է արտաքին աշխարհից դեպի ներքին աշխարհը: Յերրորդ տունը կազմում է վոտանավորի յերկրորդ շրջանը, ցիկլը. այստեղ բանաստեղծն անցնում է ներքին աշխարհից դեպի իդեական աշխարհը: Ի նկատի չունենալով այդ շրջանները, բանաստեղծի ուղիի մանրամասն սքեման այսպես է գծագրվում: Արտաքին աշխարհի չար ու բիրտ արտահայտումներ—նույն աշխարհի սիրելի ու նուրբ արտահայտումներ—ներքին աշխարհ—ներքին աշխարհի ամենանվիրական խորքեր—իդեաների հավիտենական աշխարհ:

Վահան Տերյանի ուղին մի վերելք է, վոր նա կատարում է անընդհատ թանձրացման մեթոդով: Վերելքի առաջին աստիճանը, ճանաչներս թոշնաց... տողը, տրամադրության միորինակություն է պահպանում առաջին ութ տողի ընթացքում և տեղավորվում է նրանց կենտրոնում, հինգերորդ տողում: Յերկրորդ աստիճանը, կրակներս անցան տողը, տրամադրության միորինակություն է պահպանում հետևյալ յերկու տողի մեջ: Վերջապես, յերրորդ և չորրորդ աստիճանները, անուրջներս յերկնածին տողը, վերաբերում է վերջին յերկու տողին. թվաբանորեն դատելով, այժմ ամեն մի աստիճանի վրա ընկնում է մի-մի տող: Ութ, յերկու, մեկ, մեկ—ահա Տերյանի վերելքի թվաբանական նկարագիրը:

Վահան Տերյանն ընթանում է սիմբոլիստական ստեղծագործության ուղիներով: Զուգահեռներ, համապատասխանություններ ստեղծելով արտաքին և ներքին աշխարհների միջև, նա անցնում է մեկից դեպի մյուսի ծալքերը, գգայականից դեպի

երզգայականը, անցավորից դեպի անանցը: Արտաքինն ու ներքինը, ընդհանրապես զգայականը, լոկ մի անդրադարձում է իդեաների դերզգայական աշխարհի, նրա սիմբոլները, պատճենները, վորոնք հնարավորություն են տալիս վերհիշելու իսկականը, բնագիրը: Արժեքավորն իդեաների այդ անանց աշխարհն է. նա յե միակ անաբատ ճերմակ դագաթը, մնացյալը ստվեր է, յերկրորդական, լոկ նրա պարուրանքը: Սա յե սիմբոլիզմի կրոնը:

Յեղիշե Չարենցն ասում է, վոր մշակի մի կաթիլ քրտինքի մեջ ցոլում է

Ցերկնքի անսահման հեռուն ու արևը—հեռու մի առկայծ:

Մենք կարող ենք ասել, վոր Տերյանի թախծոտ մի նվագը, ինչպիսին է «Աշնան յերգը», վորի որորող տողերով մենք սահում անցնում ենք, աղանց թափանցելու նրա խորքերը, այդպիսի թախծոտ մի նվագը, արդեն վոչ թե ցոլում, այլ պարունակում է իր մեջ անհուն աշխարհներ:

§ 17. «ԱՇՆԱՆ ՅԵՐԳԻ» ՎԱՐԻԱՆՏՆԵՐԸ:—«Աշնան յերգը» տպագրվել է յերեք անգամ: Առաջին անգամ «Մուրճ» ամսագրում, 1906 թ., նո. 11–12. յերկրորդ անգամ—«Մթնշաղի անուրջները» տետրակում, Թիֆլիս, 1908 թ.. յերրորդ անգամ մեզ հայտնի ժողովածուում, Մոսկվա, 1912 թ.:

Ցերկրորդ և յերրորդ տպագրությունների միջև տարբերությունները քիչ են: Ցերրորդում ջոկված են տրոհության նշանները, վորոնք յերկրորդում մտածված չեն դարսված: Հետո՝ յերկրորդ տպագրության մեջ դրված է. «Մութ ու մեգ է միպյն...», յերկրորդում մութ բառի փոխարեն դրված է ցուրտ բառը:

Շատ ավելի յեն տարբերվում իրարուց առաջին ու յերկրորդ ու դրանով, հետևապես, և առաջին ու յերրորդ տպագրությունները: Առաջինում դրված է. «Ծածկեցին սև ուղին», յերկրորդում սև բառի փոխարեն դրված է իմ բառը: Առաջինում ութերորդ տողն այս է՝ «գնում են հոգմավար...», յերկրորդում՝ «ցրտահար, հոգմավար...»: Վերջապես, առաջինում յերրորդ տունն այսպես է.

Յրտահար, հողմավար
դողացին մեղմաբար
անուրջները իմ հին
գնացի՜ն, գնացի՜ն...

—յերկրորդում այնպես է, ինչպես մեզ հայտնի յե այդ տունը յերրորդ տպագրությունից. այն տարբերությամբ միայն, որոր մենք վերը մատնանշեցինք:

Ինչպես տեսնում ենք, Տերյանը մի անգամից չի տիրացել ներքին այն ուժեղ ռիթմին, որի ներկայությունը «Աշնան յերգ»-ում մենք փորձեցինք ի լույս հանել, այլ ժամանակի ընթացքում, աստիճանաբար, յերկար մտածումներից ու աշխատանքներից հետո: Փոխելով առանձին բառեր ու ամբողջ տներ, Տերյանը նախ ավելի շեշտակի յե դարձրել իր բանաստեղծության վերամբարձ ընթացքն ու դրանով թանձրացրել նրա բովանդակության որդանակությունը, հետո կատարելագործել է նրան ձևի, արտաքինի տեսակետներից: Սրանց մեջ կարելի յե համոզվել, ուշադրությամբ կարդալով ու համեմատելով առաջին և յերկրորդ տպագրությունները: Իբրև իսկական ստեղծագործող, Տերյանը չի զատում ձևի ու բովանդակության խնդիրները, այլ առաջ է տանում նրանց համընթաց ու համերաշխ, իբրև մի անքակտելի միություն:

§ 18. «ՀՈՒՇԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ»:—Վահան Տերյանն ունի «Հուշերի յերկրում» (72) խորագիր կրող հետևյալ բանաստեղծությունը.

Կյանքը լռում է, աղմուկը մեռնում,
մի անծանոթ ձեռք նուրբ մթնշաղում
անցյալն ու ներկան իրար է խառնում,
իմ սրտում վոսկե անձրև է մաղում:

Մի քնքուշ լույս կա իմ հոգու համար—
ամեն ինչ ունի չմեռնող մի կյանք,
կա խորհրդավոր դյուրթող մի խավար,
ուր բախտից քաղցր են տրտունջ ու տխրանք:

Մի քաղցր վիշտ կա անդարձ անցածում,
վերհուշերի մեջ մի անսուտ դրախտ,
մի անանց վայելք, անխաբ հիացում—
կյանքից գեղեցիկ ցնորական բախտ...

Զբաղվենք այժմ այս վտանգավոր։
Արտաքին աշխարհը, կարծես, հետ է նահանջում բանաստեղծից ու կամաց-կամաց անհետանում.

Կյանքը լռում է, աղմուկը մեռնում...

Բանաստեղծն այլևս չի տեսնում, չի լսում նրան։ Նա ինքնամփոփվում է ու սուզվում իր հոգու խորքերը։ Նա սկսում է կորցնել ժամանակի սովորական ընկալման ընդունակությունն ու անցյալը և ներկան խառնվում են մի ինչ-որ փոչ ժամանակական մթնության մեջ.

Մի անծանոթ ձեռք ներքին մթնշաղում
անցյալն ու ներկան իրար է խառնում,
իմ արտում վոսկե անձրև է մաղում։

Բանաստեղծը բաղխում է գերտարածական և գերժամանակական աշխարհների մթնոլորտները։ Նա թևակոխել է հուշերի անվերջ յերկիրը։ Բանաստեղծն այժմ հայում է համայն անցյալների կատարյալ ու հավերժական նախատիպերը. նա տեսնում է այլ բաներ այնտեղ, ուր զգայական տեսակետներից խավարն է տիրապետում.

Մի ֆնիքույշ լույս կա իմ հոգու համար—
ամեն ինչ ունի չմեռնող մի կյանք,
կա խորհրդավոր դյութող մի խավար,
ուր բախտից բաղցր են տրտունջ ու տխրանք։

Ըստ Պլատոնի ուսմունքի, հոգին, մինչև իր ծնվելն, գրաված է գերզգայական իդեաների կատարյալ աշխարհի հայեցությամբ։ Ծնունդը խլացնում է հոգու հիշողությունը. զարգ մեր զգայական անկատար աշխարհը, հոգին մոռանում է այն, ինչ-որ մի ժամանակ տեսել ու հայել էր։ Բայց քանի-որ զգայական աշխարհն իր անկատարությամբ հանդերձ, այնուամենայնիվ, գերզգայական աշխարհի մի անդրադարձումն է, մի վատ պատճենը. քանի-որ տեսանելի իրերի ամբողջ համագումարը ուղղված է անտեսանելի իրերին հասնելու բուռն տենչանքով. այդ պատճառով էլ հոգին, պատեհ հանգամանքներում, իր յերկրային կյանքի առանձնապես պայծառ ու բախտավոր մոմենտ-

ներում, հանկարծ վերհիշում և գերզգայական անապատ աշխարհն ու լցվում մի մեծ կարոտով՝ նորից մատնակից լինելու նրան։

Պատանի այս տեսության իմաստությունը Տերյանը խորապես ապրել ու զգացել է.

Մի քաղցր վիշտ կա անդարձ անցածում,
վերհուշերի մեջ—մի անուտ դրախտ,
մի անանց վայելք, անխաթ հիացում—
կյանքից գեղեցիկ ցնորական բախտ...

Վերհուշերը տանում են Տերյանին գեպի յեղեմները, գեպի այլ աշխարհների յերանություն։ Սա պատոնիզմ է. ի հարկե ներքին հակումների, տրամադրությունների տեսակետից և ոչ թե գաղափարախոսական իմաստով։

§ 19. ՍԻՄԲՈԼԻԶՄ ՅԵՎ ՌՈՄԱՆՏԻԶՄ։— «Աշնան յերգ» և «Հուշերի յերկրում» բանաստեղծությունների ընթացքի տրամաբանությունը միևնույն է. դա վերելք է զգայականից գեպի գերզգայականը։ Մի տեղ Վահան Տերյանը սկսում է հողմից ու ցրտից և վերջացնում յերկնքով, մյուս տեղ նա սկսում է ամպուկից և վերջացնում դրախտով։ Սակայն այն գիծը, որը գծվում է սկզբնական և վախճանական կետերի միջև, տարբեր են յերկու բանաստեղծությունների մեջ։ «Աշնան յերգում» Տերյանը յերկար կանգ է առնում արտաքին աշխարհի վրա, համապատասխանություն հաստատում արտաքին և ներքին աշխարհների միջև ու կարծես դժվարությամբ կտրվում առաջինից։ «Հուշերի յերկրում»-ի մեջ դրանք բացակայում են։ Բանաստեղծը, շատ քիչ ուշադրություն դարձնելով արտաքին աշխարհի վրա, համարյա խկուն և յեթ, առանց կապակցող ողակների, ուղղվում է գերզգայականի վորտանները. ու այստեղ միայն հեռավոր կերպով զգում ես, որ նա դեռ վերջնականապես չի կորցրել իր կապը փորձի աշխարհի հետ։

Սիմբոլիզմն ու ռոմանտիզմն իրենց վախճանական ձգտումներով միևնույն են. այդ ձգտումների առարկան գերզգայականն է, իդեաների աշխարհը։ Բայց ըղձանքներին հասնելու միջոցներով նրանք տարբերվում են իրարից։ Սիմբոլիզմը

զգան և, չքնահայաց։ Ռոմանտիզմն, ընդհակառակը, խենթ և, անհամաչափակշիռ։ Սիմբոլիզմը հատուն և և իմաստուն։ Ռոմանտիզմն, ընդհակառակը, համեմատաբար նոթով և անխորձ։ Սիմբոլիզմը մանրամասնորեն ուսումնասիրում և յերկիրը, յուրացնում գրական աշխարհայեցողության մեթոդը, գինվում գիտության բոլոր ավյալներով, իր մկանուտ վոտներով պինդ կանգնում մայր հողի վրա ու ապա միայն խիզախորեն խորամուխ լինում յերկնքի գագանիքներին. նա հնարավոր և վերջին դարերի մարդկային մտքի լուրջ ու ստույգ պրպտումների ու նվաճումների հողի վրա միայն։ Ռոմանտիզմն, ընդհակառակը, անտես է անում յերկիրը, անդիտանում գիտությունը, խելահեղորեն խուսանում դեպի վեր՝ գագանիքներին միանգամից տիրանալու համար, բայց միշտ էլ ընկնում թևազարկ, ու անոդ թպռտում յերկրի յերեսին. նա հեռու յե մեր դարերից ու հարազատ և միջնադարին։

«Աշնան յերգի» մասին մենք ասացինք, վոր նա տիպիկ սիմբոլիստական գործ է. «Հուշերի յերկրում»-ի մասին կարելի յե ասել, վոր նա գերազանցորեն ռոմանտիկական գործ է։

§ 20. ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ։— Զգայական աշխարհն իր ամբողջությամբ անճառանչ է ու անիմաստ։ Վահան Տերյանը բացատում է այն, բայց չի մնում այդ բացատման վտանգավոր շրջանակներում։ Նա գտնում և իր մեջ ունակություն հայելու գերզգայական ճառանչավոր աշխարհը, վորը տալիս և նրան անչեջ լույսեր և յերջանկություն։ Սակայն, զգայական աշխարհն անդարձ չե կորուսված. իր մեջ այն պարունակում և մոմենտներ, վորոնք հիշեցնում են ճառանչավոր աշխարհը. հեռուն, մթնշաղն ու գիշերն այդ խոկ պատճառով սիրելի յեն դառնում բանաստեղծին։ Պարզ և, վոր բանաստեղծի համար զգայական աշխարհը լոկ մի թույլ ցոլումն և, վատ որինակը գերզգայական աշխարհի. վերհուշը կենտրոնական տեղ և գրավում Տերյանի գիտակցության մեջ ու նրա մարմնացումը՝ աչուներ՝ դառնում բանաստեղծի փայփայանքների առարկան։ Մարդուս միշտ չե տրված ընկալելու գերզգայական աշխարհը։ Դրանից անմիջապես բղխում և Վահան Տերյանի յերկրային վերաբերումը դեպի բնությունը. բնությունն իմաստալից է, յերբ այն արշալուսված և գերզգայականի ճառագայթներով. այլապես նա անիմաստություն և և վոչինչ։ Գերզգայականը փոստ և և գերագույն արժեք Վահան Տերյանի համար

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220031545